Հաշվետվություն

Ս.թ. նոյեմբերի 20-ից 23-ը <<MILIPOL>> 2017թ. <<Պետությունների ներքին անվտանգության>> 20-րդ համաշխարհային ցուցահանդեսի մասնակցության

1.Անունը, ազգանունը.

Դավիթ Տոնոյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ֆրանսիայի Հանրապետություն, ք.Փարիզ, 2017թ. նոյեմբերի 20-ից 23-ը:

4. Հրավիրող կողմը.

Ֆրանսիայի ներքին գործերի նախարարություն:

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն <<MILIPOL>> 2017թ. պետությունների ներքին անվտանգության 20-րդ համաշխարհային ցուցահանդեսին:

6. Քննարկված թեմաները.

Հանդիպումների ընթացքում քննարկվել են՝

1. երկու երկրների միջև արտակարգ իրավիճակների բնագավառում համագործակցության ընդլայնման և խորացման նոր հնարավորությունները. խորացնել 2014թ. մայիսի 15-ին ՀՀ ԱԻՆ և Ֆրանսիայի Հանրապետության ՆԳՆ միջև ստորագրված Մտադրությունների նամակի շրջանակներում առկա համագործակցությունը՝ տեղափոխելով այն երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտին առնչվող համաձայնագրի, ինչպես նաև բազմակողմ համագործակցության, մասնավորապես՝ ԵՄ հարթակ,
2. Քննարկվեց նաև «Մետեո-Ֆրանսի» և ՀՀ ԱԻՆ հիդրոմետ ծառայության միջև համագործակցությունը համաձայանգրի միջոցով կանոնակարգելու հարցը: Այս համատեքստում ֆրանսիական կողմին տեղեկացվել է Համաշխարհային բանկի կողմից իրականացված կարողությունների գնահատման հետազոտությունների մասին, պայմանավորվածություն է ձեռք

բերվել այդ հետազոտությունների արդյունքները փոխանցել ֆրանսիացի գործընկերներին՝ համագործակցության շրջանակների վերաբերյալ ավելի հստակ պատկերացում կազմելու համար,

3. Քննարկվել է «Մետեո-Ֆրանսի» առաջավոր փորձի կիրառության հնարավորությունները ՀՀ ԱԻՆ Հրդրոմետ ծառայության արդիականացման գործընթացում, ինչպես նաև ծառայության անձնակազմի մասնագիտական վերապատրաստման հնարավորությունները,
4. ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ՓԾ հրշեջ-փրկարարական ջոկատներում մասնագիտական փորձաքննություն անցկացնելու մասին,
5. ՀՀ ԱԻՆ համակարգին տեխնիկական աջակցություն ցուցաբերելու մասին և այլն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում հանդիպումներ եմ ունեցել Ֆրանսիայի Հանրապետության ներքին գործերի նախարար Ժերար Կոլոնի, Ֆրանսիայի ՆԳՆ Քաղաքացիական անվտանգության և ճգնաժամերի կառավարման կենտրոնի գլխավոր տնօրեն Ժակ Վիտկովսկու և «Մետեո-Ֆրանս» պետական կազմակերպության տնօրեն Ժան-Մարկ Լակավի հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցել լեռնային պայմաններում փրկարարական աշխատանքների անտառապատ տարածքներում հրդեհաշիջման աշխատանքների իրականացման գործընթացում անձնակազմի հմտությունների զարգացման նպատակով վերապատրաստման և փորձի փոխանակման շրջանակներում ֆրանսիական աջակցության վերաբերյալ, Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթաժողովի շրջանակներում քաղաքացիական անվտանգության ոլորտի ենթակառուցվածքների փորձաքննություն անցկացնելու վերաբերյալ, ՀՀ ԱԻՆ-ին տեխնիկական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ, ՀՀ ԱԻՆ-ի, Ֆրանսիայի ՆԳՆ-ի և ԵՄ-ի համագործակցության վերաբերյալ, կամավոր փրկարարական շարժումների խթանման ֆրանսիական փորձի

փոխանակման վերաբերյալ: Տեխնիկա և հանդերձանք արտադրող ֆրանսիական ընկերությանն առաջարկվել է 2018թ նախատեսվող <<Arm Security>> անվտանգության ցուցահանդեսի շրջանակներում ներկայանալ իր արտադրանքով՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան գնումները այդ ընկերությունից կատարելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

1. 2018թ. դեկտեմբերի 7-ը հայտարարվել է Դիմակայունության օր, ուստի՝ առաջարկվել է ԵՄ աջակցությամբ կազմակերպել այդ օրվան նվիրված վարժանք դիմակայունության բարձրացման թեմայով ՀՀ ԱԻՆ սեյսմիկ ծառայության գործակալության հետ համատեղ:
2. ՀՀ ԱԻՆ-ի և Ֆրանսիայի ՆԳՆ-ի ու ԵՄ-ի միջև համագործակցությունն իրականացնել մասնագիտական վերապատրաստումների, կոնֆերանսների, տեսակոնֆերանսների, սեմինարների, գիտաժողովների և հետազոտական աշխատանքների կազմակերպման, իրականացման, փոխայցելությունների միջոցով:

10. Գործուղվողը.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյան:

11. Ստորագրությունը, ամսաթիվը.

24 .11.2017թ.: